*Սաղմոսարանն՝ յամին 1587, կրնանք կնքուած համարել առաջին դար հայկական տպագրութեանց. վասն զի անկէ ետքը բաւական երկար ատեն այլ ևս չի լսուիր ճռնչիւն հայ մամլոյ, մինչև ցամն 1616, յորում հայկական տպագրութեան երկրորդ դարուն առաջին ձեռնարկն ալ նմանապէս Սաղմոս գրքով կը սկսի յԼվով, վերոյիշեալ Քարմատանեան տպագրատան մէջ.*



Ձև 9.

*Այսպէս ուրեմն ԺԶ դարու մէջ՝ հեռաւոր արևելից անկիւն մի, և անգրական ու կէս բարբարոս տարրներէ շրջապատեալ և տառապեալ ազգ մի, կարող է ներկայիս պարծիլ իւր նոյն դարու նախնեաց լուսամիտ և մեծահոգի տաժանմանց վրայ, որովք աշխարհներ կտրելով, և հայանիչ աշխարհածանօթ և անտեղիտալի երկայնամտութեամբ՝ հազարումէկ զոհերու համբերելով, կրցաւ արևելեան ազգաց մէջ, ինչպէս նաև արևմտեան շատ ազգերէ կանուխ՝ տպագրական հնութեամբ՝ առաջին մրցանակն ստանալ, և զնոյնն զարգացընել ոչ ինչ նուազ գովելի ջանիւք մինչև ներկայ ժամանակս։*

Հ. Ա. Տիրոյեան


## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

*ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՑՒՈՅ*

## ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

*ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆԵՑ ԵՒ ԼՈՒՍԱԲԱՆԵՑ*

**ԽՈՐԷՆ ԾԱՅՐԱԳՈՅՆ Վ. ՍՏԵՓԱՆԷ**

*(16°, Առաջաբան էջ ՃԲԺ. Երես 301. Ծանօթ. եւ ցանկ. էջ 328)*

ԳԻՆՆ Է՝ ՐԲ. 1: 50

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ 1889

Ի. ՍԿՈՐՈԽՈԴՈՎԻ ՏՊԱՐԱՆ


digitised by A.R.A.R.@